«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	«ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ»
ԱՌԱՐԿԱ	ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	ԱՐՄԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՄԱՐԶ	ԱՐՄԱՎԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Վաղարշապատի Մ. Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....3

2. Հետազոտության ընթացք: Արժեքներ…….....5

3.«Հայոց պատմություն» առարկան և ազգային արժեհամակարգի ձևավորումը 7

4. Գրականության ակնարկ….....14

5. Եզրակացություն……17

6. Գրականության ցանկ.....19

Ես[1] ճշմարտություններ գիտեմ,որոնցից մեկն ասում է՝
ուզում ես գուշակել մի ժողովրդի ապագան,նայիր նրա
երիտասարդությանը…
Վաղն ազգովի պիտի հնձենք այն ինչ որ սերմանում ենք այսօր
Գ. Նժդեհ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու աշխարհն արժեքների համակարգ է՝կազմված բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի, գեղեցիկի և տգեղի, արդարի և անարդարի, վեհի և ստորի, ուժեղի և թույլի ու բազմաթիվ այլ երևույթների վերաբերյալ նրա պատկերացումներից:

Նոր[2] սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքները ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկը երեխայի մեջ իր ազգային բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և դա մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիք երազանքները: Հայ

[1] «Հայոց ինքնության հարցեր», Սեյրան Զաքարյան, Երևան 2022 թ.
[2] Ա. Գևորգյան «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործում», Երևան 2002, էջ 65

ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ժողովրդի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այստեղ նա պետք է հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով, մշակութային արժեքների ստեղծմամբ ու պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյական արժեքները:

Հետազոտման թեման շատ արդիական է ու հրատապ այսօր, քանի որ մեր երկիրը կանգնած է աշխարհաքաղաքական արտաքին և ներքին բարդ մարտահրավերների առջև:

Նման խնդիրների լուծումը հնարավոր է միայն ազգային հիմնարար արժեքների շուրջ ազգի միավորմամբ:

Հետազոտության ընթացք

Արժեքներ

Աշխարհի մասին գիտելիքներից բացի մարդու աշխարհայացքում առկա է նաև որոշակիացված արժեքային համակարգ: Իր ողջ կյանքի ընթացքում մարդն առանձնացնում է առաջնայինը և երկրորդականը, կարևորը և ոչ կարևորը: Այդ դիրքերից ելնելով՝ նա գնահատում է աշխարհում կատարվող և գոյություն ունեցող դեպքերը: Դրանով իսկ ստեղծում է իր արժեքային համակարգը, որը ոչ միայն նրա կյանքին տալիս է իմաստ և նշանակություն, այլ որոշում գործողությունը և արժեքները: Այսպես մի մարդու համար գերագույն արժեքներ կարող են հանդիսանալ նյութական բարիքները, իսկ մյուսի համար՝հոգևոր արժեքները: Ոչ միայն մարդիկ, այլև ազգերն ունեն իրենց արժեքային համակարգերը:

Մի բան, որն արժեք է հանդիսանում մի ազգի համար, մյուսի համար կարող է արժեք չներկայացնել: Այն արժեքները, որոնք ընդունվում են մի քանի տարբեր ազգերի կողմից, կոչվում են համամարդկային արժեքներ: Օրինակ՝Կոմիտասի կամ Ա.Խաչատրյանի երաժշտությունը, Մ.Սարյանի կտավները, միջնադարյան հայկական ճարտարապետության կոթողները ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեքներ են:

Յուրաքանչյուր ազգի կենսագործունեություն խարսխված է այնպիսի արժեքների վրա, որոնք ամբողջացնում և ձևավորում են նրա ազգային դիմագիծը: Այդ արժեքներն սկզբնավորում են ազգին բնորոշ ու յուրահատուկ աշխարհազգացողության, աշխարհընկալման և աշխարհըմբռնման միջոցով:

Այն արժեքները, որոնք կազմում են տվյալ ազգի արժեհամակարգի առանցքը, կոչվում են հիմնարար արժեքներ: Հիմնարար արժեքներն էլ որոշում են այդ էթնիկ ընդհանրության ազգային նկարագիրը:

Հայոց ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են ազգը՝որպես հավաքական ամբողջություն, հայրենքիը՝որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք, լեզուն՝որպես հայ ինքնության երաշխավոր, հավատը՝որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթը, պետականությունը և հասարակական

համերաշխության սկզբունքները՝ բարեկամության, ազատության ու արդարության վերաբերյալ նրա պատկերացումները.



«Հայոց պատմություն» առարկան և ազգային արժեհամակարգի ձևավորումը

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացնող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում են արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

[3] Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ,հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն:Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները,հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները,փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնելու հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմելու համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց դրա համար է, որ կրթությունը զենք է և որպես գլխավոր իմաստ պետք է դառնա արժեհամակարգի ձևավորող:

[4]Նախատեսվում է,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին
- Կարևորի ազգային պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը
- Ունենա արդարության,լավատեսության պատասխանատվության զգացում

[3] Ղուկասյան Ա. Հայոց պատմություն 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, էջ 6
[4] Արմինե Սարգսյան,Արման Մալոյան,Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններում,էջ 31

- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը
- Գիտակցի,որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

[5] Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում,այլ գիտելիքների ու կարողությունների արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

[6] Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիր է լուծում՝հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկի ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ հաջողվում է : Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ նույնիսկ փորձառու ուսուցչի համար:Դա կախված է մի շարք գործոններից.

[5] Արմինե Սարգսյան,Արման Մալոյան,Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններում,էջ 40
[6] Բաբանսկի Յու,Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում,էջ 112

1.Սոցիալական պատվերով պայմանավորված՝դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից

2.Նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիարակչական և զարգացնող խնդիրների լուծումից

3.Ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից

4.Դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից

5.Սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու՝պատմության դասերի ուղղվածությունից

6.Դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից

7.Պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից, միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանլուց և այնպիսի պայմանների ստեղծումից, որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք

8.Սովորղների մոտ տեղեկատվության աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից

9.Ստեղծագործական զգացմունքային մթնոլորտի ձևավորումից, որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա:

Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և ընդհանրապես պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտություններին:

[7] Պատմության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց

[7] Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններում,էջ 47

առանձնահատուկ հիմքերը, ուսումնադաստիարակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ ունեցող պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ և ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներում հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսուցման դասը, զրույց դասը, գիտելիքների սուգման և գնահատման դասը, կրկնությանհանրագումարային դասերը, կինո-դասերը, էքսկուրսիա դասերը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասերը: Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, մեր համոզմամբ, խառը (համակցված) դասն է, որին ստորև կանդրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն:

Դասի այս տիպն այդպես է կոչվում այն պատճառով, որ ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում, յուրացում և ամրապնդում, ընդհանրացում, ստուգում և գնահատում: Դասի այս տիպն ամենատարածվածն է հատկապես ցածր դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս: Այս դասի ընթացքում գործադրվում են բացատրական-ցուցադրական, էվրիստիկ զրույցներ, դատողական, վերլուծական և այլ եղանակներ:

Եթե դասի ժամանակ գրեթե հավասարապես են ներկայացվում երկու կամ մի քանի դիդակտիկական նպատակներ,ապա դա կլինի խառը միացյալ դասի այս կամ այն տարբերակը:

[8] Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ:

1.Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջոցով կարմիր թելի պես անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալու և իմաստավորելու հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղելու պատմությունից: Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2.Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3.Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքներին և համամարդկային նվաճումներին, հայրենի երկրի մշակութային, պատմամշակութային կոթողներին:

4.Ցույց տալ հայ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի հանդեպ նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5.Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի և կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողին կմոտեցնեն մեր ազգային արմատներին և ակունքներին:

6.Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների շնորհիվ են իրականցվում ազգային-հասարակական իդեալները:

[8] Ղուկասյան Ա. Հայոց պատմություն 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, էջ 12

7.Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր համադրումներից:

8.Դաստիարակել խորին հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ բարձր արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո և հարգանքի զգացում, ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին և հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9.Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10.Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված վաղվա քաղաքացին գիտակցի անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաժման և վերածնության գործին:

11.Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12.Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13.Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախընդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14.Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

Շատ կարևոր է.

ա) Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

բ) Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:

գ) Զևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ անելու կարողություններ:

դ) Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կենտրոնացնելու, անցյալի և ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծությունների ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ:

ե) Զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները(լսողություն, տեսողություն, կամք, հմտություն) և մտավոր գործողությունները(համեմատում, համադրում և այլն):

Գրականության ակնարկ

«Դատապարտելի է ամեն մի դպրոց,

եկեղեցի, կուսակցություն, որն արիադավան

չի դարձնում մարդուն որպես անհատ

և հավաքականություն»:

Գ. Նժդեհ

Արժեքների բուրգի գագաթնակետին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացի ժամանակ: Այն մեծագույն արժեք է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով օգնում է իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Այս դեպքում ինձ համար ուղենիշ է Գարեգին Նժդեհը, նրա կյանքն ու գործունեությունը, վերջինիս թողած պատմական ժառանգությունը:

Գարեգին Նժդեհը բազմաթիվ դիտարկումներ ունի՝ կապված դպրոցի, ապագա սերընդի դաստիարակության հետ, որոնք արդիական են հնչում նաև այսօր: Դրանք հատկապես ավագ դպրոցի աշակերտների համար ունեն անգնահատելի դաստիարակչական նշանակություն և կարող են լուրջ դեր կատարել հանրակրթության գործում: Մասնավորապես , դպրոցի մասին խոսելով և քննադատելով իր ժամանակաշրջանի հայկական դպրոցների կրթական գործընթացի բացթողումներն ու թերությունները՝ Նժդեհը գրում է.«Շեղված նպատակը, ջերմությունը, հոգին է պակասում մեր արդի դպրոցին: Նա չէ, բայց պիտի լինի հայրենագիտության ամբիոն, տաճար: Դեռ այնտեղ հայ մանուկը պիտի ճանաչի և սովորի սիրել հայրենի ժողովուրդն ու երկիրը»:[9]

Ինչպես տեսնում ենք, Նժդեհը հատկապես կարևորում է հայկական դպրոցներում հստակ որոշարկված նպատակը, դասավանդման համակարգված բնույթը և հայրենասիրական մթնոլորտը: Միևնույն ժամանակ չափազանց մեծ ուշադրություն է դարձնում

[9] Նժդեհ Գարեգին, Երկեր երկու հատորով, հատոր I, Երևան 2002թ.,էջ 45:

կիրառվող դասավանդման եղանակին, ոճին և նյութի մատուցման ձևին: Ազգային դաստիարակության նպատակը, ըստ նրա, ազգային գիտակցության ձևավորումն է: Նժդեհի բնորոշմամբ՝ պետք է կրոնական երկյուղածությամբ դասավանդել հայրենգիտությունը, սրտի և մտքի կրակով խոսել հայրենի երկրի մասին՝ արթնացնելով Հայրենիքի պաշտամունքը մանուկների հոգիներում: Դասավանդման ժամանակ ոչ միայն պետք է կարեվորվեն փաստերը, այլ նաև տրվեն գաղափարներ, որոնք կհարստացնեն աշակերտների հիշողությունը, կբեղմնավորեն միտքը և կջերմացնեն սրտերը:

Այստեղ հարմար է մեջբերել իր ժամանակաշրջանի պատմության ուսուցչի փայլուն նկարագրությունը. «Մեկից ավելի անգամ դժբախտություն եմ ունեցել լսելու ազգային պատմություն դասավանդող հայ ուսուցչին և խորապես ցավել եմ մեր աշակերտող սերնդի համար: Մի կենդանի մեռել, մեռյալ շեշտերով, խոսում է մեռելների մասին: Պատմությունը նրա համար անհոգի կմախք է և ո՛չ թե բաբախուն սիրտ: Նա հետևակ գիտելիքներ ունի մեր պատմության այս կամ այն շրջանի մասին. գիտի ցամաք անցքեր, թվեր, անուններ, այսքանը միայն: Նա սիրտ չունի և սիրտ չի՛ դնում իր դասերի մեջ: Միևնույն տրամադրությամբ նա խոսում է և՛ Տիգրան Մեծի, և՛ Վեստ Սարգսի մասին: Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թե ինչպես պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործություններից հարբած, ամեն անգամ, երբ գինու բաժակը շրթունքներին կմոտեցներ՝ կդժվարանար չբացականչել՝ «Ճերմակաձին գինի խմի»: Ամոթի զգացումը չի՛ այրում նրան, երբ իր խոսքը հայ խռովասեր նախարարի չարագործությունների մասին է: Մեղմ ասած, ստեղծագործ վերապրում չի նրա ավանդված պատմությունը, այլ անհոգի հնախոսություն, քանզի իրեն կպակասի ազգային հպարտանք նվիրական զգացումը: Գերազանցորեն հայրենապաշտ.ահա՛ թե ինչպիսին պիտի լինի պատմության դասատուն: Այդպիսին չէ՞, ասել է՝ նրա տեղը դպրոցը չէ: Ասել է՝ բարոյապես ազատ չէ իր ձեռքն առնելու մեր ցեղի կյանքի սրբազան գիրքը»:[10]

Հետևություն անելով վերը նշվածներից՝ ըստ Նժդեհի՝ երիտասարդ սերնդի դաստիարակության, կրթության գործընթացը լավագույնս կազմակերպելու համար դպրոցը պետք է ապահովի հետևյալ պայմանները.

[10] Գարեգին Նժդեհ, Երկեր երկու հատորով, հատոր I, Երևան 2002թ., էջ 331

1. Ապահովի շեշտված նպատակի ու ծրագրի, դասավանդման հստակ մշակված համակարգի առկայություն
2. Ձևավորի հայրենասիրական մթնոլորտ
3. Պետք է ունենա ազգային գիտակցության ձևավորմանը նպաստող աշ-խատանքներ կազմակերպելու կարողություն
4. Պետք է կիրառվի առարկայի մատուցման ստեղծագործական, զգաց-մունքային հագեցվածությամբ եղանակ
5. Պետք է ապահովի պատմության ուսուցչի այնպիսի տեսակը դպրոցում, որը կձևավորի աշակերտների մոտ ազգային գիտակցություն և նրանց հոգիներում հայրենիքի պաշտամունք:

Գարեգին Նժդեհի ուսմունքի արդիականությունը պետք է դիտարկել նաև Հայաստանի Հանրապետության ներկայիս աշխարհաքաղաքական իրադրության համատեքստում, երբ վտանգված է հայոց պետականությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որն անկասկած մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է «Հայոց պատմություն» առարկայի դասերին ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին :

Հիմա հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն ապրում են դժվարին ժամանակներ, երբ վտանգված է ժողովրդի և հայոց պետականության գոյությունը:Այսօր Ավարայրի ու նոր Սարդարապատի կարիք կա: Հիմա առավել, քան երբևէ պետք է համախմբվել, մեկ միասնական բռունցք դառնալ, որպեսզի հնարավոր դառնա հաղթահարել պետության գլխին կախված հերթական վտանգը: Ժամանակի հրամայականն է կրթել ու դաստիարակել ազգային մտածողությամբ և արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբվածություն և սառը դատողություն: Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական դրվագներով, թե ինչպես են հայկական փոքրաթիվ ուժերը հաղթել թշնամու բազմաքանակ և լավ սպառազինված ուժերին՝ փորձելով հիմնավորել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվային գերակշռությունը չէ,այլ նպատակը,հանուն որի ելնում են պայքարի:

Այսօր հրաշալի սերունդ է մեծանում՝ համարձակ, պահանջատեր ու նախանձախնդիր, և մենք՝ուսուցիչներս,պետք է նպաստենք,ուղղորդենք,որ նրանք հայրենասեր ու հայրենաճանաչ լինեն. նրանք են մեր ապագան և մեր երկիրը շենացնողը:

Դպրոցական դասագրքերում,հանրակրթական և առարկայական չափորոշիչներում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային արժեհամակարգի ձևավորման հարցերին, ավելացնել հայագիտական առարկաներին հատկացվող ժամաքանակները, հնարավորություններ ստեղծել հատկապես ավագ դպրոցի աշակերտների հետ դեպի պատմամշակութային հնավայրեր հաճախակի արշավներ կազմակերպելու,որպեսզի նրանք մոտիկից տեսնեն ու ճանաչեն հայրենիքի ամեն անկյունը,նախագծային աշխատանք հանձնարարել,որի ընթացքում սովորողները ինքնուրույն կհետազոտեն ու կբացահայտեն իրենց ծննդավայրի պատմությանը վերաբերող փաստեր,կկարողանան գտնել իրենց արմատները:

Հիմա մենք կարիք ունենք ձևավորելու հայրենասեր մարդու կերպար, որը որպես հայ պետք է իմանա՝ որն է իր անելիքը հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունը նրան պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենաառաջնայինը հայրենիքը սիրելն է իրական սիրով:

Վստահաբար կարծում եմ, որ ազգային արժեհամակարգի ձևավորման մեջ մեծ է դպրոցի և ուսուցչի դերը, և մենք ամեն ջանք պետք է գործադրենք, որ ՀՀ վաղվա քաղաքացին լինի հայրենասեր, հայրենատեր, սեփական ազգային-հոգևոր արժեքներին նվիրված ու սրտացավ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Զաքարյան, «Հայոց ինքնության հարցեր», Երևան, 2002թ.
2. Ա. Գևորգյան, «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործում», Երևան, 2002թ.
3. Ա. Ղուկասյան , Հայոց պատմություն 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ
4. Ա. Սարգսյան, Ա. Մալոյան, Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ
5. Յու . Բաբանսկի, Աշակերտների դաստիարակությունը: Կոմպլեքսային մոտեցում
6. Գարեգին Նժդեհ, Երկեր երկու հատորով, հատոր I, Երևան 2002թ.